Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10178

Գ. ԲՕԲՕՐԻԿԻՆ

ԴԱԺԱՆ ՕՐԵՐ

ԹԱՐԳ. ԱՐՍԷՆ ԱՐՄԷՆԵԱՆ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
1907

891.71
Բ-77

891.71
Բ-77
ակ.

21 JUL 2008
10 NOV 2010

Գ. ԲՈԲՈՐԻԿԻՆ

ԴԱԺԱՆ ՕՐԵՐ

ԹԱՐԳ. ԱՐՍԷՆ ԱՐՄԷՆԵԱՆ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
1907

05.03.2013

10170

Типографія Х. Бархударянцъ, Срѣтенка, Мясной пер., д. Бѣляева.

2328-54

ԴԱԺԱՆ ՕՐԵՐ

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ

ՄՕՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ։

ՆՈՒԻՐՈՒՄ Է ԹԱՐԳՄԱՆԻՉԸ.

Երեկոյեան՝ Դուշեան, արտասուքն աչքերին, մտաւ ինձ մօտ՝ ընդունարանը։

Ես մենակ էի և նոր էի սկսել թէյ խմել։ Ամուսինս տանը չէր։ Երեխաները իրանց սենեակներում զբաղուած էին դասերով։

—Տիկին, ի՞նչ անենք, ի՞նչ անենք։

Նա մինչև հիմա էլ աւելի շինական է, քան քաղաքայ-ին։ Նա Վլադիմիրսկի նահանգի գեղջկուհի է։ Բարեսիրտ է, բայց բթամիտ, զուեհիկ, շարժուածքը դանդաղ, յիշողու-թիւնը վատ, խօսում է գիւղական ոճով և իրանց յա-տուկ՝ ժողովրդական լեզուով։ Տանը՝ գիւղացիների հետ գերաններ է սղոցել։

—Ի՞նչ է պատահել, Դուշեա։

—Այն տիկին... Խոհարարուհու մօտ եկել են իւր ըն-կերները։ Ուսանողներ... Գործատուել անողներ... Արհեստա-աորներ... Տնէց տուն մտն են գալիս... Ծառաներին հա-նում են։

—Ինչպէս թէ հանում են։ Ես իսկոյն չհասկացայ։

—Այսինքն... Սպառնում են... Իբր՝ քանի դեռ կենդանի ես դուրս եկ, պէտք է ամենքն էլ գործատուել անեն։ Օրա-կան էլ երեսուն կոպէկ կստանաս։

—Ախր, այդ ո՞րտեղ:

—Ամեն տեղ, տիկին... Ասում են Եառուզայի միս կողմից են սկսել:

Եւ նա հեկեկաց:

—Ախր ո՞ւր գնամ... Երեսուն կոպեկ... Դէ, ի՞նչ իմանաս թէ էն էլ կտա՞ն, թէ չէն տալ: Ախր զիւղն ի՞նչով գնամ: Իսկի չես էլ կարող գնալ: Այսօր վերջին ճանապարհն էլ զործադուլ արաւ: Ուսանողները երկիւղ են զցել...

«Ուսանող» խօսքը արտասանելիս՝ նրա ձայնը դողում էր:

Այդ նրա համար աւազակի կամ թալանողի պէս մի բան է: «Ուսանող» խօսքի հետ էլ անբաժան՝ առաջ է գալիս «ջհուդ» խօսքը:

Խոհանոցում արդէն կրկնում են այդ հրէշային լուրը և ամենքն էլ հաւատում են նրան՝ իբր թէ՝ տեսէք, ուսանողները և ջհուդները կամենում են մեզ ճորտութեան դարձնել և այդ պատճառով աղաները դէպի նրանց ներողամիտ են:

Տէ՛ր Աստուած, ի՞նչ անյատակ անդունդ է՝ ժողովրդային խաւարի և մտաւոր աղքատութեան:

Բայց ո՞վ է մեղաւոր: Միթէ մենք ամե՞նքս:

Շատ կարելի է... Մինչևանգամ հաւանական է, եթէ ոչ միայն մենք, այլ և մենք:

Ո՞վ մեզանից հոգով նախանձախնդիր եղաւ մութ մասսաների լուսաւորելու:

Միայն պրոֆէսսիոնալ մարդիկ, ժողովրդական վարժապետները և վարժուհիները:

Ահա ես համարւում եմ մարդասէր, յառաջադէմ կին, ես՝ նախկին ուսանողուհիս կողմնակից եմ ամենայն իրաւունքների և ազատութեան:

Բայց և այնպէս՝ ես «տիկին» եմ... Ես սիրում եմ զիւղը, ամենայն ամառ գնում եմ մեր ագարակը, արտասուալից սրտով խղճում եմ զեղջկուհիներին, երեխաներին և առ հասարակ բոլորին, ցաւում եմ, որ նրանք ճնացել են աղքատութեան, մթութեան, ցեխի, անօգնութեան և սարսափելի հիւանդութիւնների մէջ: Նրանց

բժշկում եմ հրապուրանքով և, չշուարելով այն հանգամանքից, որ ես մի քիչ բարձր եմ «ջադուբաղներից», բայց և այնպէս ես հոգով վստահ չեմ նրանց, եթէ ոչ կուլտուրական, գոնէ հոգեկան «վերածնութեան»:

Չէ՞ որ մեզ մօտ զիւղում, որի մէջ հազար-հինգ հարիւր հոգի կայ, դուք չէք գտնիլ մի անզրագէտ զեղջկուհի, (ասենք պառաւները անզրագէտ են) որ պատասխանէր զէթ այնպիսի մի հարցի, որ զուրկ չլինի քրիստոնէական կրօնի բովանդակութիւնից, որ գոնէ Աւետարանից, կամ «Գործք առաքելոց» ից էական մի բան հասկանար, որ կարողանար մտացածին ասէր «Հայր մեր» ը, կամ «Հաւատոյ հանգանակը» կամ կարողանար հասկանալ թէ ի՞նչ ասել է «Եւ ընդ Քերովբէս» և վերջապէս, որ համ զուսած չլինի թէ «Խնդա Կոյս» ը մի խօսք չէ կազմում, որ մի էութեան անուն չէ, իբրև թէ «խնդակոյս»:

Բայց տես, որ ես այժմ տրտնջում եմ Դունեայի և խոհարարուհի Պաշայի վայրենի զաղափարների վրայ: Ախր նրանք զեղջկուհիներ են, զիւղի հօտն են, որտեղ սուրբ Նստատասիային (կամ մի այլ սրբուհու), ժողովրդի մէջ անուանում են «հաւի աստուած», իսկ Փրոլային և Լաւրային դարձրել են կառապաշտական աստուածներ և համարել են ձիերի ցեղի հովանաւորողներ:

Եւ ահա հասել է հատուցման րոպէն:

Ծառան ամենքիս համար (մինչևանգամ բարի և ռամկավարական տրամադրուածներիս) ինչ որ օտարոտի է դարձել, համարեա թէ մեքենայական, ճիշտ «Աւտոմատ» բուֆետի մէջ գտնուած մեքենայի նման, որ զրսի բաժանմունքներով առաջ է բերում թիքաներ և բաժակներն ու գաւաթները լցնում զինով ու զարիջրով:

Միթէ մենք եղբայրներ ու քոյրեր ենք: Կամ նրանց հետ հաւասար իրաւունքներով քաղաքացիներ ենք: Եւ կամ նրանց հետ «ընկերներ» ենք, ինչպէս զոչում են սոցիալ-դեմոկրատները՝ վառուած բանուորական համերաշխութեան զգացմունքով:

Մենք նրանց համար միևնոյն «տէրերն» ենք, այսինքն՝ կապիտալի միևնոյն ներկայացուցիչները, ոչ լաւ՝ «աղա»

վաճառականներից ու գործարանատէրերից։

Ներկայ ժամանակի համեմատ՝ նրանց դրութիւնը աւելի ծանր է, քան գործարանական «պրոլետար»-ի, որոնք կարողացան միանալ և պաշտպանել իրանց պահանջները։ —Դունեա, սեղանը պատրաստեցէք... Դունեա, այս դուրս բերէք, այն շուտով հասցրէք... Չհանուէք, ու մեզ սպասեցէք մինչև ժամի 4-ը։ Առաւօտեան ժամի 6-ն վեր կացէք։ Չհամարձակուէք հիւրեր ընդունելու։ Տնից կարող էք հեռանալ շաբաթը մի անգամ, այն էլ պիտի վերադառնաք ժամը 10-ից առաջ։

Ութ ժամուայ աշխատանք.—սա բանուորների այժմեան գլխաւոր պահանջն է։

Բայց մեր ծառան... քանի՞ ժամ է նա ոտքի վրայ լինում։ Նա ապրում է «ասածի» նման՝ «ոչ գործ կատարիր, ոչ էլ գործից փախիր»։ Երևի տասնուվեց ժամ։

Արտասահմանում, երբ ես ջրերն էի գնացել, գերմանական մի լրագրի մէջ կարդացի, որ Սկանդինաւիայի նշանաւոր գրողը, Բրիսթիանիի քաղաքում, մի սրճարանի սպասաւորի՝ մի օր ու գիշեր ժամանակով տուել է «պաղոմեար» ը, այսինքն քայլերի չափը ցոյց տուող ժամացոյցը։

Նա մի օր ու գիշերուայ մէջ անցել էր տասն ու հինգ հազար քայլ։ Իսկ տասնու հինգ հազար քայլը մի կիլոմետր է, ուրեմն մեր չափով աւելի քան վաթսուն վերստ։ Եւ սա մի փոքրիկ պետութեան մայրաքաղաքի սրճարանում։ Բայց ի՞նչ կանէ նա՝ պարիզում՝ «Cafè Riche» կամ «Cafè de la Paix» սրճարաններում։

Չէ՞ որ իմ ամուսինն էլ մարդասէր մարդ է և պաշտպանում է «դեմոկրատական պլատֆորման» բայց օրերումը նա պարզապէս, գարշանքով ու հեգնութեամբ պատմում էր թէ ինչպէս Պետերբուրգում՝ Անգլիական ակմբանոցում սպասաւորները բեխերի պատճառով գործադուլ են արել։

Չէ՞ որ, աղայական տներում և առաջնակարգ ակմբանոցներում, սպասաւորները պէտք է սափրեն՝ թէ երեսները և թէ բեխերը։ Իսկ այդտեղ երկու համարձակները ներկայացել են բեխերով։ Այդ բոպէին ակմբանոցի բոլոր

«gros donnets» զայրացել են և իսկոյն խիստ հրաման է տրուել «բեխերը սափրելու», բայց սպասաւորները պատասխանի տեղ in corpore գործադուլ են արել։

Եւ բոլոր բարձրաստիճան պարոնները, գեներալ-ադիւտանտները, պետական խորհրդի անդամները, դեսպանները, սենատորները, իշխաններն ու կոմսերը և պալատական զանազան աստիճանի ծառայողները մնացել են խառնիշփոթ դրութեան մէջ։

Ի՞նչ անել... Մնում էր, որ իրանք, բեխերը սափրելով, (բայց չէ՞ որ բեխերը պարտաւորուած սեպհականութիւն է ամեն մի պալատականի, թէկուզ արք պետականի համար) և ֆրակ հագնելով, հերթով ծառայեն իրանց՝ ակմբային ընկերներին. ամաններ փոխեն, կողէկ մատուցանեն, անձեռոցով սրբեն յատակի վրայ թափուած սելտերեան ջուրը։

Զուարճալի տեսարան կլինէր։

Դէ, այդպէս կարող է պատահել մեզ՝ բոլոր «աղանելիս» հետ։—կամ այսօր, կամ վաղը։

Մեր սպասաւորը—Բոլեսլաւը, ինչպէս լեհացի, ոչ մի դէպքում մնայեալ ծառաների հետ չի յարմարում։ Այսօր նա ինձ մտերմաբար հաղորդեց միևնոյն բանը, ինչ որ ասել էր Դունեան։

—Զերդ գերազանցութիւն, ուսանողները մեզ են գալիս բնակարանները ու ծառայողներին դուրս են հանում։

—Ես լսել եմ, Բոլեսլաւ։

—Ես նրանց ցոյց կտայի, թէ ինչպէս պիտի խռովեցնել ժողովրդին։ Մենք ձեզանից լեռվին զոհ ենք։ Ես նրանցից հօ չեմ վախում, բայց կանայք լաց են լինում... Նրանց կարելի է վախեցնել...

Այդ սպասաւորը աղքատացած ու անյայտութեան մէջ ընկած ազնուականներից էր։ Եւ նրա հոգին դեռ մնացել էր «աղայական»։ Նա սարի նման կանգնած էր տիրող կարգերի համար։ Թէպէտ նա ռուսներին չէր սիրում, բայց մեզ—աղաներիս աւելի մօտիկ էր քան ծառաներին։

Երկու կանայքն էլ—աղախինը և խոհարարուհին ատում են նրան և կարծեմ երդուել են «քաշ գցել» նրան։

Այդպէս էլ նա է նրանց հասուցանում և ես վախում եմ. չլինի թէ վերջը առաջ գայ մի արիւնոտ ընդհարում։

Օդի մէջն էլ «գործատուներ» են։ Իմ երեխաները՝ Մանեան և Վոլոդեան ահա քանի ժամանակ է սկսել են խոյս տալ ինձ հետ մտերմաբար խօսելուց։

Մանեան թէպէտ տասնուչորս տարեկան է, բայց նա արդէն մեծ աղջիկ է երևում։ Նա մինչև վերջին ժամանակն էլ ամէն բան «սերտող» է, բնաւորութեամբ քընքոյշ է, մարմնով ու սրտով էլ ճրկուն։ Ընդհանրապէս նրանից ստացած տպաւորութիւնը ախորժելի է։ Նա ստանում էր լաւ թուանշաններ, ընկերուհիներից սիրուած էր՝ սիրով էլ յարմարւում էր դպրոցական «պետական» կանոններին, և շատ երբեմն էր ծիծաղում վերակացուհիների կամ նոյն իսկ տեսչուհու վրայ։

Այժմ նրա մէջ նկատւում է մի տեսակ յուզմունք։ Նա դառել է ծածկամիտ, իսկ եթէ մի բան ասէ, այն էլ կլինի մի խառնուրդ։

Ինքն ու եղբայրը սկսել են ինչ՞որ բանի համար փըսփսալ։ Բայց երբ ես ներս եմ մտնում, նրանք կամ լռում են կամ փոխում են խօսակցութիւնը։

Շատ յաճախ պատահում եմ նրանց հայեացքներին, որոնք ձրգում են ինձ վրայ՝ իհարկէ ոչ ուղղակի, այլ ծուռ կերպով։ Ես այդ հայեացքների միտքը կարողացայ կարդալ։

«Դէ, մայրիկ, հիմա մենք կտեսնենք թէ՝ դու և հայրիկը ի՞նչպէս պիտի պահէք ձեզ։ Օդի մէջ ուրիշ հոտ է գալիս։ Մենք ևս «քաղաքացիներ» ենք և ոչ «տղաներ» ու «աղջիկներ»։ Ահա հիմա մենք կտեսնենք թէ՝ դու ի՞նչ պէս կվերաբերուիս թէ՝ զէպի մեր աւտոնոմիան թէ զէպի մեր պլատֆորման։

Ուղղակի այդ խօսքերն են նրանց հայեացքներում։

Աւտոնոմիա։

Ես նրանց երբէք չեմ կշտամբել։ Նրանք վաղուց սովորել են ընդունել մեզ՝ երկուսիս՝ և մանաւանդ իրանց մօրը, իբրև ընկերների և ոչ իշխանաւորների կամ անայլին վերակացուների ու սանձահարողների։

Ուստիներան գնալով, նրանք մեզանից չեն հեռացել, ընդհակառակն աւելի մօտեցել են։ Որովհետև ինչ էլ որ նրանք այնտեղ քաշել են, ինչքան էլ ծանր բան են տեսել իրանց իշխանաւորների և կամ ընկերների մէջ, տանը միշտ հանդստացել են։

Այժմ իմ ամենամեծ պարգևն այդ պատասխանն էր. և այդ այն բոլոր հոգսերի և մտքերի փոխարէն, որ ես մտցրել եմ նրանց հոգեկան կեանքի մէջ։

Հիմա էլ երևի գիմնազիան բռնում է նրանց։ Նրանք ոյժ են զգացել իրանց մեծութեան և իրանց «վեհաժողով»ի մէջ։

Երէկ Մանեան եղբօր հետ խօսակցութիւն ունենալուց յետոյ, փափուկ շրթունքներից թռցրեց.

—Մենք կամենում ենք Լիզկային վեր քաշել։

—Ո՞վ է այդ Լիզկան, հարցրի ես։

—Վերակացուհին—Ելիզաւետա Մատվէեվնան։

Ես լռեցի՛, բայց Վոլոդեան ծիծաղեց։

«Վեր քաշել» բոլորովին նոր դարձուածք է։ Դա նման է ռուսական այն թարգմանութեան, որին ուսանողները Պարիզում՝ անուանում են «Conspuer en tel»։

II

Տէր Աստուած, ինչպէս ամեն բան արագութեամբ քանդւում է։

Ի՞նչ է կատարւում քաղաքում, մենք չենք տեսնում, այլ զիտենք միմիայն ինչպէս լուրեր, այն էլ մէկը միւսից սարսափելի։ Մենք արդէն նստած ենք առանց լրագրի։ Շուտով էլ ոչ լոյս կլինի, ոչ ջուր, ոչ միս, ոչ կաթ։ Եթէ ոչ այսօր, վաղն էլ մեզ կանջատեն ամբողջ Ռուսաստանից։ Ոչ մի ճանապարհ էլ չի լինելու։

Մտանում է ինչ որ անողոք—տարերային և յաղթական բան։ Դա աւելի ուժեղ է քան բունթը, աւերումը և փողոցային անկարգութիւնները։

Զրկել շարժուելու կարողութիւնից, սիպել ապրել ինչպէս պաշարուած բերդի մէջ և սպասել...

Եւ մեղ երկուսիս՝ թէ իմ և թէ ամուսնուս մէջ՝ այդ յուզմունքը առաջ է բերել մի շարք հակասական զաղափարներ, զգացմունքներ, տրամադրութիւններ, բողոքներ և երկիւղներ։

Ի՞նչ, մեզումեղ խաբե՞նք։ Այո՛, երկիւղ։

Ինձ համար—շատ ծանր կլինի կասկածել որ և է յանցանքի մէջ իմ երեխաների հօրը—մի մարդու, որի հետ ես կապել եմ իմ վիճակը։ Մենք ամուսնացել ենք սիրահարուելով։ Եւ մինչև օրս մեր մէջ մի այնպիսի տարաձայնութիւն չի եղել, որ հիմնուած լինի որ և է սկզբունքի վրայ։ Առաջ էլ պատահել է, որ ամուսինս խօսել է չհաւատացողի ձևով։

Երեխաները կրթելու մէջ՝ նա ինձանից խիստ է։ Նա զբաղ խաւորապէս ձգտել է, որ երեխաները հեռու մնան զանազան ձևի կապկութիւնից, երամական յափշտակութիւնից և «թուխակային» շաղակրատութիւնից։

Նա ամենևին չի յափշտակուում այն նորագոյն դէպքերի բռնկումով, որ սկսել է տիրել մեր դպրոցներին՝ թէ բարձրին, թէ միջնակարգին։ Երէկ՝ ուսանողական անկարգութիւնների մասին խօսելիս, նա ասաց.

—Այդ ուսանողուկները երևակայում են իրանց դիկտատորներ։ Երկու—երեք օր էլ որ անցնի, նրանք Մոխովայա փողոցում կկազմեն հասարակական փրկութեան կոմիտէ։

—Դրա նման մի ինչ որ բան կայ. նկատեցի ես։

—Հոգով՝ մինչև հիմա էլ ես ինձ ուսանող եմ համարում։ Բայց ամեն ինչին սահման կայ։ Նրանք ի՞նչ են կամենում անել մեր alma mater-ի հետ։ Մի յեղափոխական օթևա՞ն։

—Չէ մի՝ օթևան... Ընդհատեցի ես։

—Հապա ի՞նչ։ Երկուսից մէկը. կամ պէտք է համալսարանական զիտութեան որդեգիրը լինել, կամ սովորական քաղաքային բնակիչներ։ Էլ ի՞նչու համար ուսանող դառնալ, նշանագրեսար հագնել և աւտոնոմիայի ձգտել։ Միայն նրա համար, որ այսպիսի վճիռ կայացնե՞ն։ «Լեկցիաները», յամենայն դէպս, մենք համաձայն ենք լսելու, բայց պահանջում ենք, որ համալսարանը գոյութիւն ունենայ աւելի շուտ յեղափոխական պրոպագանդի համար։

—Ի՞նչ արած, որ ընդհանուր ոգին այդպէս է։

—Բայց այդ մահ է ամեն զիտութեան և ակադեմիական աղատութեան։

Ես ժպտացի։

—Զիտութեան մասին ո՞վ է մտածում։ Հարցրի ես։ Եւ ո՞վ է մեղաւոր, որ ուսանողները և զիմնազիայի աշակերտները բռնկուած են այդ հասանքով։

—Ի՞նչի հոսանքով։

—Յեղափոխական։ Խօսքից չպիտի վախենք։ Միևնոյն հոսանքով, որ այժմ անցնում է ամբողջ Ռուսաստանի երեսով։

—Ո՞վ է մեղաւորը։ Համարեա զայրացած բացականչեց ամուսինս։

—Իշխանութիւնը։ Սարսափելի «փորակերներ»ը, ինչպէս անուանում են զիմնազիայի աշակերտները։ Փթած կողմի սարուկները։ Յետոյ մենք՝ բոլորս։

—Մենք՝ ո՞վ. աւելի կրքով գոռաց նա։

—Մենք—ծնողներս... Հայրեր և մայրեր։ Մենք չկարողացանք հին սիստեմը փոխել։ Միայն այժմ են մեզ թոյլ տալիս խորհրդների մասնակցել։

—Մենք մեղաւոր ենք, եթէ մեր որդիքը մանելով համալսարաններ, կամ ուրիշ բարձրագոյն դպրոցներ, արդէն պատրաստ են...

—Պատրաստ են։ Ի՞նչի։

—Յեղափոխական շարժումների։ Այդ մեր մնանկութիւնն է։ Այնպէս, ինչպէս և իրանց տեսչութեանը։ Եւ իսկապէս մեր երեխաները՝ այստեղ տանը՝ ի՞նչ կարող են սովորել, երբ նրանք լսում են մեծերի խօսակցութիւնը և մինչևանգամ մասնակցում նրանց։

—Ոչ մի ժամանակ էլ ես ոչ մի բան չեմ քարոզել։ Ոչ մի ժամանակ ես այն կարծիքի չեմ եղել թէ՝ համալսարանը պէտք է դառնայ հասարակական միտինգների վայր։

—Բայց նրանք տեսում ու հասկանում էին, որ դու և ես մեռնող բիժիմը ընդունում էինք զայրոյթի արժանի։ Մեր լեզուն չափաւոր էր, բայց և իրողութիւնը յեղափոխական էր։ Եւ ահա պէտք է մենք դրա համար հատու-

ցանենք և... Ամուսինս ընդհատեց ինձ ու ասաց։

—Դու այդ ասացիր... Մի տեսակ չարախնդությամբ։

—Զգիտեմ։ Բայց ինձ համար այս պարզ է. հատուցման օրը հասել է։

—Ինչքա՞ն համար, ի սեր Աստուծոյ. գոչեց նա։

—Երկկրեսության համար։ Նրա համար, որ մենք մեզ երևակայում ենք արմատականներ, մինչևանգամ յեղափոխականներ, բայց ապրում ենք ինչպես բուրժուա և ինչպես անհաւասարության, կապիտալիզմի և աշխատաւոր դասի ստրկացման կողմնակիցներ։

—Մե՞նք, քեզ հե՞տ։

—Այո՛, այո՛։

Ես սաստիկ զլդուեցի և դուցէ աւելի ուժեղ առաջ գնայի, բայց այդ րոպէին Դունեան ներս մտաւ ու երկու այցետոմս տուաւ։

—Դրանք օրիորդներ են, խնդրում են իսկոյն ընդունել. ասաց նա։

Մի այցետոմսի վրայ ես տեսայ ինձ ծանօթ անուն. Սպիրիդոնովա։

Դա ուսանողուհի է, գաւառից է, իմ ընկերուհու ազգականն է։ Անցեալ տարի նա ինձ մօտ՝ եղել է երկու անգամ։ Գեղեցիկ, տաքարիւն աղջիկ է, կարծեմ սոցիալ-դեմոկրատ է։

Միւս ազգանունն ինձ համար բոլորովին անծանօթ էր։

Ամուսնոյս հետ մենք վիճում էինք իմ բանուորական սենեակում։

—Երկու ուսանողուհի են եկել ինձ մօտ, կարո՞ղ եմ ես նրանց այստեղ ընդունել։

—Խնդրեմ, ես չեմ խանգարելու։

—Ես քեզ չեմ հեռացնում, դուցէ քեզ էլ հետաքրքիր լինի։

Նա ոչինչ չպատասխանեց, բայց նստեց և սկսեց ծխել։

—Դունեա, այդ օրիորդներին խնդրեցէք այստեղ։

Առաջինը մտաւ Սպիրիդոնովան։ Նա բարձրահասակ էր, վայելուչ կազմուածքով, թխահեր, ամրողջովին սև ու նոր տարազով կարած հագուստի մէջ։ Նրա յետևից

մտաւ իւր ընկերուհին—ազգանունը Սամոկատովա. ազեղ, կարճ մազերով, ակնոցներով—ուսանողուհու տիպար, որի նմանը իմ ժամանակներն էլ կային, հագնուած է աղքատ և անփթութեամբ։

Նրանց այցելութեան պատճառն էր՝ նուիրատուութիւններ ժողովել մի ինչ որ «համակուսակցական կոմեատի» օգտին։ Կուրսերում մեծ յուզմունք է տիրում։ Եթէ ոչ այսօր, վաղը նրանք կփակուին։

Նրանք ինձ իսկոյն տաք խօսակցութեան մէջ մտցրին։

Այդ րոպէին Ներանց համար ամենաեռուն կենսական հարցը պրոֆէսորների վրայ ունեցած դատն է։ Նրանցից մէկի վրայ շատ ծանր յանցանքներ են ընկած։

Իմ ամուսինն էլ մասնակցեց խօսակցութեան։ Այդ պրոֆէսորը մի ժամանակ նրա աւագ ընկերն է եղել։

—Ի՞նչի մէջ էք նրան մեղադրում։ հարցրեց նա։

—Նրա քաղաքական վարքի անմաքրութեան մէջ։ Մի շարք փաստեր կան, որ այդ ապացուցանում են. պատասխանեց Սպիրիդոնովան վրդովուելով։

Նրա սև ու խոշոր աչքերում նշմարւում էին կայծեր։

—«Անմաքրութիւն» խօսքը ծանր կշռադատելի է և միևնոյն ժամանակ մութ։

—Դատը կկայանայ մօտակայ ժողովում. ասաց ակնոցներով ուսանողուհին։ Եւ եթէ նա վաղն երևայ դասախօսութեան, մենք նրան թոյլ չենք տալ խօսելու։

—Դէ, լաւ, ընդմիջեց ամուսինս. դուք իրաւունք ունիք պրոֆէսորից սպասել գլուխ թիւն և դասախօսութեան տաղանդ, բայց նրա անձնաւորութիւնը պիտի ազատ լինի յարձակումներից։

—Մենք չենք կարող ամբիոններից լսել ակնյայտնի յետադէմներին։

—Սպասեցէք, ոլքան ինձ յայտնի է, շատ վաղուց չէ, որ այդ միևնոյն պրոֆէսորը ամենքի սիրելին էր։

—Ինչ որ եղել է, այն անցել է, ասաց ակնոցաւոր ուսանողուհին։ Ամենքի գինը որոշելու ժամանակը հասել է։ Նրա տաղանդի մասին մենք չենք բացասում։ Բայց այդպիսի պարոնների հոգին իսկական բուրժուայի հոգի

է եղել, ծածկուած սիրուն ձառերով։ Այժմ նրանք իրանք իրանց մատնեցին և շատ լաւ եղաւ։

Խօսակցութիւնը կարող էր փոխուել սուր վիճաբանութեան։ Ես նայեցի ամուսնուս վրայ մի առանձին հայեացքով։ Նա կանգնեց, գլուխ տուաւ և, գլխիկ հեղնութեամբ, ասաց.

—Եթէ այդպէս շարունակուի, այն ժամանակ դուք պէտք է ձեզ մօտ մշտական—յեղափոխական ամբիոն հիմնէք, ինչպիսին որ կար Պարիզում, տերրորի ժամանակներում։

—Մենք այդպիսի պրոֆէսորներին միջոց կտանք իրանց արդարացնելու, պատասխանեց Սպիրիդոնովան՝ իրան բաւական զսպելով։

Ամուսինս գնաց։ Ես մնալով նրանց հետ, ամենայն քաջութեամբ դարձայ նրանց ու ասացի.

—Ես պատրաստ եմ զոհել ինչ որ կարող եմ, բայց նախօրօք կկամենայի իմանալ այդ ի՞նչ «Համակուսակցական կոմիտէ» է։

—Նա կանոնաւորում է ամեն մի շարժում. պատասխանեց նրանցից մէկը։

—Եւ նրա վճիռները պարտաւորեցուցիչ են ամենքի՞ համար։

—Անպայման. ասաց ակնոցաւոր աղջիկը։

—Ներեցէք, ես այդ տեսակ դերիշխանութիւնը համակրելի չեմ համարում։ Այդ միևնոյն միահեծանութիւնն է, միայն թէ յեղափոխական։

—Այլ կերպ չի կարելի, ասաց Սպիրիդոնովան։

—Ցաւում եմ։

—Դուրս եկաւ մի անյարմար գլուխ։ Նրանք դուրս գնալիս՝ երկուսն էլ իրար ետևից ասացին, որ իրանք մտադիր չեն բռնաբարել իմ խիղճը։

Բայց նրանց դէմքերը արտայայտում էին բաւականի գարշանք դէպի իմ բուրժուական յետադիմութիւնը։

Ես նրանց ուղեկցեցի մինչև հաշար։ Այնտեղ՝ ակնոցաւոր աղջիկը, ոչ մէկի վրայ չնայելով, ասաց.

—Ի՞նչ նրբութիւնների ժամանակ է, երբ այսօր, հաւանական է, որ տեղի ունենայ կոտորածը։

—Ո՞րտեղ, վախեցած հարցրի ես։

—Այդումը, արձանի մօտ, կամ հէնց Տվերսկայա փողոցի վրայ։

Իմ կրծքի վրայ ասես սառուց դրին։

«Բայց իմ երեխա՞ն։ Ախր տաք գնդակը կարող է նրան էլ հասնել»։

III

Ճաշի ժամը վաղուց լրացել էր, բայց ոչ Մանեան կար, ոչ Վոլոդեան։ Ես և ամուսինս սկսեցինք անհանգստանալ։

Ամուսինս յանդիմանեց ինձ թէ ես աղջկանս մենակ բաց եմ թողնում. այն էլ այսպիսի խառնիշփոթ օրերին։

Բայց փոքր չէ։ Դեռ մի տարի առաջ նա խնդրեց ինձ, որ իրան թոյլ տամ առանց աղախնու դուրս գալու։ Ես էլ թոյլ տուի։

Եթէ նրա հետ մի ողբերգական բան է պատահել, միևնոյն է մեր Դունեան չէր փրկելու նրան։

Սրտիս խորքում ես էլ համաձայն էի ամուսնուս հետ՝ և որդն ինձ կրծում էր։

Առաջինը եկաւ Վոլոդեան՝ զրգռուած, մազերն անկարգ դրութեան մէջ, գօտին էլ կորցրած։

Իմ երեխաները սուտը չպիտի ասեն։ Ես նրանց միշտ այդպէս եմ սովորեցրել։ Տանը նրանց ոչոք ոչ մի բանի համար հարց ու փորձ չի արել, բայց և այնպէս նրանք սովոր չեն որ և է բան ծածկելու։

—Դու ո՞րտեղ էիր։

Նրա աչքերը վառում էին։ Թշերն էլ նոյնպէս։

—Մայրիկ, ես... ես մասնակցում էի ցոյցերին։

—Ատրճանակից կրակե՞լ էք։

—Այո, կրակել ենք։

—Դու ի՞նչպէս համարձակուեցիր։

Ես այնպէս վրդովուեցի, որ, կարծես, պատրաստ էի նրան մի լաւ ապտակ տալ։

—Մեզ դպրոցից արձակեցին, մայրիկ։ Ընկերներս ինձ տարան ու յանկարծ մենք ընկանք ամբոխի մէջ։ Ղազախնե-

ըրն իջան ձիերից ու սկսեցին կրակել դէպի տան յարկերի տակ ընկած օթեակները, որտեղ տեղաւորուել են հայ-թուխ բանուորները: Ամենքիս էլ այդ շատ բարկացրեց: Մենք գոռացինք, երդեցինք «մարսելիոզ»: Նրանք թափուեցին մեզ վրայ: Մտրակի հարուածը հասաւ իմ մէջքին: Մի դաղախ բռնեց օձիքս: Ես ազատուեցի: Գօտիս էլ, ինչպէս տեսնում ես, կտրուեց:

Այդ բոլորը նա պատմում էր արագութեամբ, բայց առանց մի փոքր երկիւղի:

Կարծես մէկը՝ մի ակնթարթում փոփոխել էր իմ Վոլոդեային:

Հայրն էլ յարձակուեց նրա վրայ: Ես վախեցի, կարծելով թէ նա կխփէ նրան:

—Լսիր, հայրիկ. ընդհատեց նրան Վոլոդեան: Միթէ այդ քստմնելի չէ՞: Միթէ դարշելի չէ՞ մի տան վրայ կրակելը: Եթէ միայն կրակէին նրա վերին մասերին, ուր տեղաւորուած էին գործադուլ անողները, բայց անխտիր կրակել տան բոլոր յարկերի՞ն... Մնացեալ բնակիչներն ի՞նչով են մեղաւոր:

—Բանը դրա մէջ չէ: Ախր դու ի՞նչպէս ընկար ամբոխի մէջ:

—Մեզ արձակեցին: Ես էլ ընկերներ ունիմ: Մենք որոշել էինք դասադուլ անել: Անկարելի է սովորել: Անկարելի է նստել յունական քերականութիւն խծբծել, երբ դրսում գոյութիւն ունին այդ տեսակ սառը վարմունքներ:

Նա ամբողջովին կարմրել էր: Նրա փափուկ շրթունքներին խաղում էր բարկութեամբ լի ծաղրը:

—Բայց ահա մենք քեզ կկոդպենք. գոռաց հայրը:

—Կկոդպէ՞ք: Զէ, դուք այդ չէք անիլ: Ես էլ անձնաւորութիւն եմ: Ասենք միևնոյն է: Մայրիկ, դարձաւ նա դէպի ինձ. ես ցոյցերի մասնակցող էի, թէ սովորական անցորդ: Միթէ զաղախների վայրենի օրդան ջոկելու՞մ է: Դուք երկուսդ էլ կարող էիք փնասուել:

—Բանը դրա մէջ չէ, գոչեց հայրը:

Եւ... լռեց:

—Մենք առանց քեզ քաղցած նստել էինք:

—Ներիր, հիմա այսպիսի ժամանակ է:

—Պէտք է քեզ առանց ճաշի թողնել:

—Թողնէք:

Նա երբէք այդ ձևով չէ արտասանել:

Ամուսինս նայեց ինձ և ոչինչ չասաց:

Սեղանի մօտ մենք նստել էինք ինչպէս պատժուածներ: Մանեան դեռ չէր վերադարձել: Երկրորդ, երրորդ կերակուրն էլ մատուցին:

Ամուսինս նայում էր ինձ վրայ անհանգիստ և կատաղի հայեացքով: Այդ հայեացքի մէջ դեռ միևնոյն յանդիմանութիւններն էին:

«Դու ես մեղաւորը: Բոլորը քո չափազանց սէրն է դէպի կանանց ազատութիւնը: Աղջկանը թողնել մենակ դէ, գնա այժմ ուրախացիր:

Նա նկատելի կերպով սպրդնել էր:

Ես հէնց սկսեցի հարց ու փորձ անել Վոլոդեայից, բայց ամուսինս խսկոյն ընդմիջեց.

—Ո՞րքան ժամանակով են ձեզ արձակել, հարցրեց նա Վոլոդեայից դեռ միևնոյն բարկացած ձայնով:

—Երեք օրով: Միևնոյն է, մենք վճռել ենք դասադուլ անել:

—Մենք ոչ:

—Երեք՝ բարձր դասարանների աշակերտներս:

—Ի՞նչ էք արել, միտինգ էք ունեցել թէ ինչ:

—Այո, ժողով:

—Դրա համար էլ ձեզ արձակե՞լ են:

—Եթէ ուզում ես, հենց դրա համար:

Այդ բոլորը Վոլոդեան ասում էր իւր խօսակցութեան նոր շեշտով, առանց ձայնի ցնցումներով, դրական ոճով և աւելի հանդարտ արտասանելով: Ոչ այնպէս ինչպէս առաջ էր:

—Շատ լաւ: Ի՞նչ վճիռներ էք կայացրել. հեգնօրէն հարցրեց ամուսինս:

—Այո, հայրիկ:

—Ախր ի՞նչ վճիռներ:

—Մի քանիսը: Ամենքից առաջ երեքը քաղաքական:

ZUUR Арм.ССР

—Ասացէ՛ք, խնդրեմ: Իհարկէ «չորս պոչաւորի» հաշուին:

Վօլօդեան քմծիծաղ տուաւ:

—Այո՛, «չորս պոչաւորի» հաշուին էլ:

Այդ խօսքը նրանք զորձ են ածում՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութեան վերաբերմամբ:

—Իսկ ձեր դպրոցական գործերի վերաբերմամբ: Թունալից ոճով ընդգծեց հայրը:

—Առաջինը՝ ուսուցիչը կամ դաստիարակը, եթէ կամենան ներկայ գտնուիլ մեր ժողովներին, այդ ոչ այլ կերպ եթէ ոչ մեր համաձայնութեամբ: Նրանք ոչ մի ձայն չեն ունենալ, ոչ իսկ կարող են լինել խորհրդատու:

—Հա՜, հա՜, հա՜... ծիծաղեց հայրը և մի այնպիսի շարժում արաւ, որ կարծես թէ կամենում էր բռունցքով խփել Վօլօդեայի ծոծրակին:

Հաշտում լսուեց զանգակի սուր և արտաքոյ կարգի ձայնը:

Ես վեր թռայ: Սիրտս իսկոյն թուլացաւ:

—Այս Մանեան է: Տէր Աստուա՛ծ:

Դուռնեան իսկոյն չվազեց խոհանոցից: Ես վազեցի հաշտի դուռը բաց անելու: Ծնկներս դողում էին:

«Եթէ յանկարծ ներս բերեն Մանեայի դիակը...»

Մանեային ներս է մտցնում մի ուսանող:

Ես նեռուեցի դէպի նա և լաց եղայ:

Նա դալկացել էր, քոնքից արիւն էր կաթում: Գլուխարկ չունէր: Արնաթաթախ՝ մի սև թաշկինակով կապուած էր ձախ ականջը:

—Մայրիկ, մի վախիր:

Ոչ իմ կրծքին ընկաւ, ոչ էլ լաց եղաւ: Նա դեռ ինձ ներկայացրեց իւր ուղեկցին:

—Ահա, ինձ ով փրկեց, մայրիկ:

—Ուսանող Տօպօրկով, ծանօթացրեց նա իրան:

Նրա գլխարկն ամբողջովին կեղտոտուած էր: Վերարկուն ցեխոտ, պատառոտուն փէշերով: Մաղերն անկանոն թափուել էին ճակատի վրայ:

—Մանեան վերադարձել է, կանչեցի ես՝ դէպի սեղանատունը:

Դուրս վազեցին ամուսինս և Վօլօդեան:

Ամուսինս ինձանից պակաս չվախեց, իսկոյն սպրդնեց և կցկտուր ձայնով ասաց.

—Պէտք է բժշկի ետևից գնալ... Պէտք է պառկեցնել: Դու վիրաւորուա՞ծ ես, Մանեա: Սասա՞ի: Խօսիր:

—Գնդակը տարել է ձախ ականջիս բլթակը:

—Գնդա՞կը. գողալով ասացինք մենք:

—Երկիւղ չկայ: Դեղատանը ես կապել եմ:

—Դուք բժշկանո՞ւմն է.ք, հարցրեց ամուսինս:

—Այո, հինգերորդ կուրսի ուսանող եմ:

Վօլօդեան առաւ քրոջ ձեռը և համբուրեց նրա ճակատը: Նրա աչքերը վառուում էին: Թշերը կարմրել էին, բայց նա ոչ մի երկիւղի նշան չունէր:

Ահա թէ ինչ քաջեր եմ ծնել ես, այն էլ երկու սեռի:

Մանեային մենք տարանք իւր սենեակը, բայց նա անդադար կրկնում էր.

—Ես՝ ոչինչ, ես՝ ոչինչ: Սա անց կկենայ:

Ամուսինս խնդրեց ուսանողին՝ մասնակցել մեր ճաշին, բայց նա մերժեց:

—Պէտք է շտապեմ: Զգիտեմ ինչ եղան միւս ընկերներս:

Իմ յիշողութեան մէջ մնացել է նրա նիհար դէմքը, խոր ընկած աչքերը, փոքրիկ միրուքը և երեսի խալը: Նա ամբողջովին եռում էր: Նրա աչքերում շանթահարւում էին զայրոյթի կրակները:

Ամուսնուս և Վօլօդեային հեռացրի, ապա սկսեցի հանել Մանեայի շորերը:

Այստեղ միայն՝ նա յանկարծ ցնցուեց, թեքուեց դէպի ինձ ու լաց եղաւ:

Բայց և իսկոյն նա ամօթ զգաց այդ տեսակ փոքրոգութեան համար:

Ես սիրտ չէի անում, որ և է բանի մէջ յանդիմանել նրան և ասել թէ՝ ինչպէս նա կարողացաւ զոհ գնալ փողոցային խառնիշփոթութեանը:

Եւ ստիպում էի, որ նա հանուի, որ ապա դնեմ անկողնի մէջ:

—Մայրիկ, ասաց նա՝ բարձի վրայից թեքուելով դէպ ինձ. մի չարանար ինձ վրայ, ես չկարողացայ կանգ առնել, ես յափշտակուեցի։

—Բայց դու տեսնում էլ՞ր, որ պէտք է հրացան արձակեն։

—Գնդակն ինձ հասաւ ետևիցս և ես վայր ընկայ։ Եւ ահա, ի՞նչն է սարսափելին, նա ձեռներով ծածկեց երեսը. ես կէս ժամ ուշաթափուած ընկայ մի դիակի-մի սպանուած բանուորի վրայ։ Այդ սարսափելի է։

Նա սկսեց դողացնել։ Ես աւելի սաստիկ վախեցի և այմուսնուս ուղարկեցի բժշկի ետևից։

Ամուսինս հոգով աւելի ընկճուել էր, քան թէ ես։ Ախ՝ կեանքի զօրեղ բոպէներին աղամարդիկ մեղանից թոյլ են։

VI

Մենք՝ ամուսնոյս հետ մեր սովորական կեանքից դուրս եկանք թէ ինչպէս մարդիկ, թէ ինչպէս քաղաքացիներ և թէ ինչպէս ծնողներ։

Երեխաներին մենք ամենայն եռանդով դաստիարակեցինք։ Մենք՝ մեզ վրայ պարտաւորութիւն վերցրինք՝ տանել այդ հոգիներին դէպի այն բոլորը, ինչ որ մենք համարեցինք բարութիւն և ճշմարտութիւն։

Իսկ այժմ ի՞նչ։ Ոչ թէ մենակ դրանց գիմնազիան։ Այն սիստեմը, որ այսքան երկար ճնշեց մեր երեխաներին, տապալուել է, սնանկացել։

Մենք էլ ենք սնանկացել։ Պէտք չէ շուռ ու մուռ դալ։ Բանից երևաց, որ մենք էլ ենք կարողութիւնից զուրկ։

Տանը մէջ, մեր բնակարանում՝ դեռ մի կերպ մեր զրութիւնը պահպանում ենք։ Այն էլ ինչ ճանապարհով։ Նրանով, որ մենք թոյլ չենք տալիս նրանց ասել այն, ինչ որ բորբոքուել է նրանց մէջ, ինչով որ բռնկուել է ամբողջ երիտասարդ Ռուսաստանը՝ սկսած գիտակցութեան հասած արհեստաւորից մինչև բարձր ինտելլիգենցիայի ներկայացու-

ցիչները, պառաւած՝ հինգերրոդ կուրսեցի ուսանողից մինչև քաղաքային ուսումնարանի աշակերտներն ու աշակերտուհիները։

Վոլոդեան և Մանեան դադարել են ինձ ամեն բան պատմելուց։ Նրանք իրար հետ սկսել են շշունջներով խօսել։ Վոլոդեայի գիմնազիան փակել են մինչև նոր կարգադրութիւն։ Մանեան կարող է գնալ իւր ուսումնարանը, բայց նրան ես դեռ չեմ թողնում։

Երկու օր նա տաքութիւն ունէր, գիշերները զառանցում էր։

Վէրքը—մեծ բան չէ։ Բլթակից կտրուած է մի փոքր կտոր, որ ամենևին նկատելի չի լինիլ։ Բայց նա չի կարողանում ազատուիլ այն կոշմարից, երբ նա ուշաթափութիւնից յետոյ, իրան տեսել է ընկած մեռածի տառը մարմնի վրայ։

Դա կմնայ նրա ամբողջ կեանքի մէջ։

—Մայրիկ, ասում էր նա ինձ, իւր տաք ձեռով բռնելով ինձ ու ամբողջ մարմնով ցնցուելով. մայրիկ, ախ՝ այդ վարմունքին անուն չունի։ Անմեղներին այդպէս սպանել փողոցում։ Ախ ինձ էլ կարող էին այդպէս անել։ Եւ այդպէս ծեծել. մտրակով, թրերով, այդպէս գազանաբա՞ր, ա՛խ, գարշելի է։

Նրա աչքերը վառուում էին։ Նա ամբողջովին խորին յանդիմանութիւն էր դառել։

Էլ միտք ունէ՞ր նրան խրատներ կարդալու, ցոյց տալու, որ ինքն է մեղաւոր, ինչո՞ւ է փողոցները չափչփել ու մանակցել ցոյցերին։

Առանց այդ էլ Մանեան և Վոլոդեան այնպէս են հաշուում, որ իրանց ծնողները՝ եթէ այդ հրացանաձգութիւնները և այդ զազրելի կոտորածը չեն արդարացնում, բայց այնքան էլ քաղաքացիական արիութիւն չունին, որ բարձրաձայն յայտնեն իրանց նողկանքը։

Վոլոդեան առաջին անգամն է, որ հօրը հետ «կոպիտ» է վերաբերուում։ Բայց իւր ժամանակին մեր մասին էլ այսպէս են ասել, երբոր մեզ թոյլ ենք տուել որ և է դէպքում հերքել՝ մեր ծնողների կամ ուսուցիչների ասածը։

Դպրոցներից դրանց արձակել են մեծ խայտառակութեան պատճառով։

Նրանք դաստիարակին ձգել են հաշտը, ժողով են կազմել և, յայտարարելով «քաղաքական բոյկոտ», խմբովին դիմել են դէպի հարեւան կանանց գիմնազիան, դռները ջարդել են և երբ նրանց ներս չեն թողել, հաւաքուել են բակը ու սկսել են գոռալ թէ՝ եթէ աշակերտուհիներին այս բոպէիս բաց չթողնեն, նրանք կկոտրատեն պատուհանների ապակիները։ Առաջին և երկրորդ դասարանցիները ամենքից կատաղի են եղել այնպէս որ պէտք էր մեծերը նրանց ձայնակցէին։

Բակն է մտնում մի ինչ որ զաղախ, բայց առանց զէնքի։ Երրորդ դասարանցիներից երկուսը առաջ են գալիս և ատրճանակները մեկնում դէպի նա։ Զաղախն խկցոյն փախչում է։

Ահա հէնց այդ զէնքի համար էլ ամուսինս և Վօլօդեան այնպէս տաք վիճեցին իրար հետ։

Վօլօդեան սկսեց փող խնդրել՝ զէնք առնելու համար, բայց ամուսինս մերժեց։

Սկզբում՝ Վօլօդեան խօսում էր աղերսանքի ձևով, բայց հայրը գոռաց.

—Ցիմարութիւններ են։ Այդ նրա համար, որ յեղափոխութեամբ խաղաս։ Ոչոք ձեզ չի խօսացնիլ։ Առաջին անկարգութիւններ անողը դուք էք։

Վօլօդեան՝ մի ակնթարթում գունատուեց ու դուրս թռցրեց.

—Դու չարանալու իրաւունք չունիս, հայրի՛կ։ Մենք որոշել ենք զենաւորուել։ Մենք իրաւունք ունինք ինքնապահպանութեան համար։ Սև հարիւրեակները որսորդի նման ընկած են մեր ետևից, ինչպէս վայրենի գազանի ետևից։ Հայհոյում են մեզ։ Մեզ անուանում են աղաւնու բոյներ։ Բայց մենք մեզ համար չենք զողում։ Մենք պարտաւոր ենք պահակախմբեր կազմակերպել՝ աշակերտներին պահպանելու համար։

—Ահա ձեզ՝ հանդէս են եկել տխուր կերպարանքի տապեաներ։

Ամուսինս՝ իւր դռդիոը պէտք էր այդքան չընդարձակէր։ Նա այդպիսով կատաղեցրեց երեխային։

Վօլօդեան բարձրացաւ մի տեսակ «ցոյցով» ու դուրս գնալով, ասաց.

—Լաւ, ես ինձ համար Ֆիննի դանակ կգնեմ, բայց ես ինձ կենդանի չեմ ձգիլ ուրիշի ձեռքը։ Այդպէս էլ իմացէք։

Եւ ահա նա նստած է իւր սենեակում կամ դուրս է գալիս այնտեղից առաւօտեանից։ Նրան հօ չի կարելի կողպել։ Նա—մեծ է և զօրեղ։ Ախր այժմեան երեխաները ընդունակ են ամենայանդուգն միջոցների դիմելու։ Հաւանական է, որ նա արդէն դանակ է ձեռք բերել։ Նա կամ կկտրէ իւր կոկորդը, կամ իրան կայրէ լամպայի նաֆթով։

Մենք՝ երկուսս էլ անզօր ենք։ Այս կատարեալ սնանկութիւն է։ Եւ դրա մէջ ամբողջովին մեղաւորը մենք ենք։ Նշանակում է, որ մենք մեր զաւակներին չենք կարողացել մի այնպիսի դիժով դրաւել դէպի մեզ, որ գիմնազիան չկարողանար այդպէս կաշկանդել։

Մեր ընտանեկան օջաղը, բարձր ոճով ասենք, նման է «կահաւորած սենեակների», որտեղ կենդանները չեն ճանաչում իրար։ Ճաշի ու թէյի ժամանակ մենք լռում ենք։ Եւ ես դողում եմ. չլինի թէ հայր ու որդի էլի կբռնեն։

Որդիքս կարծես ծաղրում են, որ մենք՝ երկուսս վշտացանք, երբ յանկարծ լամպաները հանգան և ամբողջ բնակարանը մնաց խաւարի մէջ խարխափուած։

Նրանց համար այդ սիրելի էր։ Նրանք հրճւում էին։ Այդ—ամենակարող գործադուլն է։ Այդպէս անարգանքով նրանք պէտք է վերաբերուին դէպի մեր հոգացողութիւնը՝ մեղէնի, նաֆթի, մոմի, իւղի, կաթնի և ուրիշ մթերքների մասին։

Ամուսինս՝ էլ չհամբերեց և ճաշի ժամանակ նետեց դէպի նրանց։

—Եթէ ուզում էք սուրը Անտոնիոսի կերակրից օգտուիլ, խնդրեմ շնորհ անէք։ Գիտնականները բացատրում են, որ քաղցից չի կարելի մեռնել, հարկաւոր է միայն՝ մի բաժակ եփուած ջուր խմել և երկու կտոր շաքար ուտել։

Նաֆթը և մոմերը՝ մեզ մնա՝ ամեն տեղ վառւում

էին, բայց ամուսնուս համար տխրալի էր պարապել հին ձևի լուսաւորութեան տակ: Նա վաղ է զարթնում, ժամը հօթին և նրա համար՝ սեղանի պայծառ լուսաւորութիւնը դառել էր հոգեկան պահանջ:

Նա վարձել է տեղափոխուող մեքենան, որին կպցրած է սեղանատան լամպան:

Երէկ «ուվրիերը» եկաւ, որ այդ բոլորը յարմարեցնէ և կարգի բերէ:

Ես գրեցի «ուվրիեր», որովհետև դա այն արհեստաւորներից չէր, որոնց հետ մենք ընտելացել ենք: Բայց նա աւելի նման է գիմնազիան աւարտած մի երիտասարդի. երկայն մազերով, փոքրիկ բեխերով, սև բլուզայով ու գօտով:

Նա խօսում է ինչպէս «ինտելլիգենտ»:

Գործադուլի վերաբերմամբ ես մի նկատողութիւն արի: Նա նայեց ինձ իւր թանձր յօնքերի տակից և մի առանձին զիրք տուաւ իրան:

—Քանի որ մենք գործադուլ չենք արել, ձեզ համար միևնոյն է, տիկին:

—Բայց անելու փորձ եղե՞լ է:

Նա մի ծուռ ծիծաղեց:

—Ընկերներս ինչպէս կվճռեն:

—«Ընկերներ» բառը նա արտասանեց համարեա թէ իւր ձևով: Դա մի սրբազան դարձուածք է, որն այժմ պարտաւորական է բանուոր կուսակցութիւնների համար: Դա թարգմանութիւն է ֆրանսերէն «compagnon» բառի:

—Եւ դուք կհպատակուէ՞ք:

—Հապա ի՞նչպէս:

—Սխր մե՞նք ինչով ենք մեղաւոր:

—Տիկին, այժմ ժամանակը չէ որոշելու թէ՝ ո՞վ է արդարը, ո՞վ է մեղաւորը: Առէք լրագրերը: Գրաշարները գործադուլ են անում ոչ թէ մենակ իրանց պահանջների համար, այսինքն ութ ժամուայ պարապմունքի և ուրիշ բաների մասին, այլ դա զուտ քաղաքական «բոյկոտ» է:

Այդ խօսքը նա արտասանեց զանդաղութեամբ և նկատելի ինքնագոհութեամբ:

—Լրագրերը հօ մենակ ձեզ պէս բնակիչների համար չեն, նրանք հարկաւոր են այլ և մեր եղբայրներին—բանուորներին, բայց, ահա, տեսնում է՛ք, նստած ենք առանց լրագրական կերակրի: Այսպէս էլ ամեն բանի մէջ:

Ես չհերքեցի:

Ես յիշեցի այն համեմատութիւնները, որոնք ամուսինս սիրում էր կրկնել այն ժամանակները, երբ տեղի էին ունենում զանազան սպանութիւններ և գաղտնի միութիւնների ուժեղ քարոզներ:

Ինչ որ կատարուում է մեր հայրենիքում, նա համեմատում էր ցուլերի կռուին:

Ցուլն այն բեժիմն է, որին պէտք է տապալել: Ցլամարտիկները՝ գաղտնի կոմիտէների հրամանները կատարողներ: Իսկ մենք՝ ինչպէս հանդիսականներ նստել ենք մի մեծ ամֆիթէատրոնի նստարանների և նայում ենք թէ՝ ի՞նչ է կատարուում կրկէսում, որտեղ երևում են՝ եթէ ոչ մարդկանց, բայց սպանուած ձիերի արեան լճակները:

Բայց այժմ չի կարելի նստել բարձր յենարանի ետև, ուր որ չէր կարող բարձրանալ՝ ոչ ցուլը, ոչ տէգակիր ձիավարն, որն իւր տէգով ծակում էր նրա փորը:

Հարկաւոր էր մեզ՝ բնակիչներիս էլ մանել ասպարէզ:

Ոչ այսօր, այլ վաղը՝ միևնոյն «սև հարիւրեակները» որքան աւելի կատաղի կերպով պիտի ջարդեն մեր զաւակներին, մեզ էլ հանդիստ չպէտք է թողնեն, այլ մեզ էլ պէտք է մայթերի վրայ կանգնեցնեն և գոռան.

—Դու ո՞ւմ կողմն ես. մե՞ր թէ «կրամօլնիկ»-ների՞:

Միթէ ես իմ երեխաների աչքում չե՞մ տեսնում այս յանդիմանութիւնը:

«Մայրիկ» չի կարելի «ոչ այս» լինել «ոչ այն»: Դուք՝ հայրիկի հետ՝ Ձեզ աղատամիտներ է՛ք հաշուում, ապացուցէ՛ք այդ:

Սխր ի՞նչ բան է աղատամիտը՝ մինչև անգամ նրանց համար: Դա էլ միևնոյն «բուրժուան» է: Նա պէտք է կարդի կոչէ, նա ծունկ է չոքում «սեպհականութեան» սրբազան սկզբունքի առաջ: Բայց այդ բոլորն ո՞վ է պաշտպանում: Ռոտիկանները, ժանդարմները, զրագունները և զա-

զախները։ «Վերջնական հաշուին էլ» մարակներն ու հրացանաձգութիւնները։

Իմ գլուխն ամբողջովին շուռ է գալիս։ Ցանն ինձ այնպէս եմ զգում, իբր թէ պահուած եմ մի շարք ծանր յանցանքներ գործելու համար։

V

Այս միրաժ չէ, այլ իրական կեանք։

Ես և ինձ հետ մի շարքում կանգնած ամուսինս և զաւակներս, մի հրապարակի վրայ ենք, մի քանի հազար հոգուց բաղկացած ամբոխի մէջ։

Միթէ այս միևնոյն քաղաքն է։ Ահա Թատրոնը, միևնոյն սիւները, միևնոյն բրօնզէ ձիերը, կառքի հետ՝ Թատրոնի ճակատի վրայ։ Ձախ կողմից միևնոյն պատը, որի միւս կողմից երևում են տների շարքերը, եկեղեցիների գլուխները և զանգակատները։

Ո՞վ է խօսում։ Մի պրոֆեսոր։ Նրա խօսքերը հազիւ են հասնում մեզ։ Բայց այդ միևնոյն չէ՞։ Մենք զգում ենք, որ նա խօսում է, որ նա պարտաւոր է խօսել։ Լրսւում են համակրանքի ձայներ։ Պրոֆեսորը գլուխ է խոնարհում։ Մենք էլ գոչում ենք։ Մանեան, դեռ ականջը կապած, օդում բաշլղի ծայրն է շարժում, իսկ Վօլօդեան— գլխարկը և՝ ամբողջովին կարմրած՝ գոչում է.

—Կեցցէ՛ ազատութիւնը։

Ամուսինս լուռ է, բայց ժպտում է։ Նրա աչքերն էլ փայլում են։ Նա ձեռին բռնել էր մի թերթ, որի վրայ նշանակուած է «չորս ազատութիւն»։

Նրանց տուել են։ Չէ, նրանց առել են։ Դա ողորմութիւն չէ, այլ իրաւունքներ, որ խլուած են փտած բիժիմից։

—Մեր Magna charta libertatum, ասում է ամուսինս, ցոյց տալով երկք յօդուածի վրայ։

Իսկ եթէ յանկարծ խաբե՞ն։ Եթէ անդառնալի և էական ոչինչ չտա՞ն։

Չէ, չեմ ուզում կասկածել, նենգամիտ լինել։ Այս բոլորը սարկական զգացումներ են։ Ազատ քաղաքացիները

ոչինչ չպիտի ունենան, բացի հաւատից դէպի փայլուն ապագան և բացի ոյժի ըմբռնումից՝ պաշտպանելու այն բոլորը, ինչ որ ձեռք է բերուած։

Կեանքիս մէջ առաջին անգամ ընկայ այդ տեսակ ամբոխի մէջ։ Ո՞վ կարող էր մտածել թէ այսպէս բան կարող է պատահել՝ ոչ թէ տասը տարի այլ հէնց տարի ու կէս առաջ։ Ինչ որ բան ճնշում ու արբունքի է հասցնում։

Ես միշտ վախել եմ ժողովրդի ահագին համախմբումից։ Ցիշում եմ։ Կրեմլի և Զամոսկվորէչիայի հրապառութեան մի օր, ես ընկել էի պատի նման սղմուած մի ամբոխի մէջ, որի ծայրը հասել էր մինչև Նիկոլսկայա փողոցի վերջը։ Այդ օրը մենք բարեկամների հետ ճաշեցինք «Սլաւեանսկիյ բազար» ճաշարանում։ Այդտեղից դուրս գալուց, մենք որոշեցինք ոտով անցնել մինչև Կրեմլ։ Հանդէսի ժամը չեմանալով, մենք ընկանք այդ ամբոխի մէջ։ Ցիշում եմ՝ թէ ինչպէս ես երկիւղից սարսափած, հեւակելով ընկերուհուս, նեռուեցի դէպի մի անկիւն, որ ընկած էր Սինոդական տպարանին մօտ գտնուող տան՝ դուրս ցցուած պատի մօտ։

Այնտեղ մենք կուչ եկանք և սպասեցինք, մինչև որ անցնի այդ շարժուող մարդկանց մարմիններից գոյացած հեղեղը։

Ամբոխի մէջ ոտոտակ գառնալը ինձ աւելի սարսափելի էր թուում քան կենդանի՝ կրակի մէջ պրուիլը։

Ո՞վ տեսել է Խոդինկայի զարհուրանքը, նա չի կարող չսարսափել՝ ամբոխի մէջ մահ ստանալուց։

Բայց այստեղ ինձ ոչինչ չէր շփոթեցնում։ Կարծես ես ամբողջ էութեամբս յենուել էի այդ մեծաթիւ ամբոխին։

Եւ մենք առաջ էինք ընթանում, չմտանալով թէ ուր, ոչքից էլ ոչինչ չհարցնելով։

Ոլորիքս սղմուել էին ինձ։ Նրանք շարունակ կանչում էին և օդում ծածանում՝ մէկն իւր գլխարկը, միւսը բաշլղը։ Ամուսինս մեզանից չէր հեռանում։ Մենք երեխաների ձեռներից բռնել էինք։ Մէջ տեղով գնում էին Վօլօդեան և Մանեան, իսկ նրանց աջ ու ձախ կողքերով—ես և ամուսինս։

Գնում ենք, գնում, բարձրանում ենք վերև, առանց իրար ճնշելու, առանց խլրտումների։ Ծփծփում էին՝ ոչ

թէ հինգ, ոչ թէ տասը, այլ մի քանի տասնեակ կարմիր դրօշներ ու դրօշակներ, որը պարզ, որն էլ զանազան մակագրութիւններով։

Վօլօդեան՝ այդ մակագրութիւնները կարդում էր հեալով։ Մանեան կրկնում էր և քրքջում... քրքջում էր ու կրկնում։

Իսկ ետևից մեզ հրում էր միևնոյն ահռելի ալիքը։ Միշտ առաջ ու առաջ։

Փողոցի երկու կողմերից վերցնում էին թագաւորական՝ երեք-գունի դրօշակները, պատռում էին նրանց սպիտակ և կապոյտ շերտերը և դարձնում էին նրանց ամբողջովին կարմիր։

Ահա հասանք հրապարակին։ Մի ուսանող բարձրացաւ լապտերի սեան գլուխը և նրա վրայ պնդացրեց կարմիր դրօշը։ Պատշգամբն է դուրս գալիս զօրավարը մի սպայի հետ և ինչ որ բան է խօսում։ Ահա բարձր գոչումներ, ինչ որ բանի համար պահանջներ։

—Աղատել բանտարկեալներին. բացականչում է Վօլօդեան։

Նրանք երկուսն էլ՝ քրոջ հետ մղում են դէպի պատշգամբը։

Ես և ամուսինս պահում ենք նրանց։

Դղրդաց ռուսական մարսելիեզը։ Գլուխների ծովը նորից ծածանեց—և սահեց դէպ հեռուն, դէպի վեր։

Բանտարկեալների ետևից... Դէպի Բուտիրկա... ինչպէս արձագանք սաւառնում էր մեր առջևից ու ետևից։

Ես և ամուսինս նայում ենք իրար։

«Այս ի՞նչ է» ոչ վախեցածի նման, ոչ էլ ուրախացածի՝ հարցնում է նա ինձ՝ աչքերով։

—Բաստիլիայի առումն է. ուրախ ձայնով ասում է նա։

Մեր երեխաները խորին ոգևորութեան մէջ էին, Վօլօդեան բռնել էր քրոջը ու մղում էր առաջ։ Մենք նրան պահում էինք։ Ես աղաչում էի հեռալ մեզ մօտ։ Ամուսինս էլ բռնել էր Մանեայի մէջքից ու պինդ պահելով, շարունակում էինք գնալ։

Հրուենք դէպ առաջ... այնտեղ, Սարատովի վանքի մօտ...

ապա գնանք. ասաց նա երեխաների գլխի վրայից։

—Չէ, հայր, ամօթ կլինի փախչել. գոչեց Վօլօդեան։

Սա՝ էլ այն փափկասուն, հեզ մանուկը չէ, այլ աղատութեան զինուոր։ Նրա գլխարկը ծոծրակի վրայ է, վերարկուի կոճակներն արձակուած, ձեռն էլ մի փայտ է ձրգել՝ ծայրին կարմիր փալասի կտոր։ Նա երգում էր ռուսական մարսելիեզը։

Եւ ես ու ամուսինս զգում էինք ամօթ։ Եւ էլ չէինք ուզում դէպի դուրս մղուել, կառք վարձել ու երեխաներին առնելով, տուն գնալ։

Ո՞րքան գնացինք մենք—չգիտեմ։ Ժամանակի ու տարածութեան համար մեր միտքը կարծես մեռել էր։

Ինչպէս տարօրինակ է։ Այս ազմուկների արանքում ես յիշեցի մեր՝ փիլիսոփայութեան պրոֆիսորի դասախօսութիւնները կուրսերում, երբ նա խօսում էր Կանտի մասին և զարգացնում էր այն միտքը թէ՝ ժամանակը և տարածութիւնը - մեր մարդկային երևակայութիւններն են, բայց կապէս նա չկայ տիեզերքի կեանքի մէջ և նրա համար, ով որ համարում է նրա ստեղծողը։

Մենք անցել էինք բաւական ճանապարհ։ Գլխների ծովը դեռ անկանոն շարժւում էր։ Ահա հեռուից երևում են բանտի պատերը։ Լսւում են ամբոխի աղաղակները։ Կարծես թնդանօթի ձայներ լինին։

Ոտներիս թուլութիւնը ես սկսում եմ զգալ։ Աչքերիս առաջ քօղեր են բարձրանում, բայց ես անհերևակայելի ճիգ եմ գործ դնում, յենւում եմ Վօլօդեայի կռանը, նա ինձ տանում է։ Մի քանի լոպէ ևս, և ես կարող եմ ուշաթափուել։ Այն ժամանակ ինձ ոտնակոխ կանեն։ Այս երկիւղն՝ ինչպէս ելէքտրական ղսպանակ ղուարթացնում է ինձ։

Այնտեղ՝ առջևում ազմուկն աւելի սաստկանում է։ Երգեցողութիւն, ուրա՞... Ցանկարծ միւս կողմից երևեցան զաղախները և անցան մի ուրիշ կողմ։ Առջևի շարքերն արդէն բանտի դռների մօտ էին։

Ամեն ինչ կանգ առաւ... թէ յետոյ ի՞նչ է եղել, այդ ես չգիտեմ։ Ես ուշքի եկայ մի ինչ որ պատի մօտ։ Ինձ

ուշքի էր բերում ամուսինս։ Մի ուսանող էլ ընկած էր ծնկներին։ Նա բացարձակ վերարկուի մեջ էր, որի տակից երևում էին նրա գունաւոր շապիկը։

—Իսկ որտե՞ղ։

—Նրանց յետ քշեցին. պատասխանեց ամուսինս դժգունած, ձակատը քրտինքով թաց։ Գլխին գլխարկ չկար։

—Գնանք, որոնենք, գոչեցի ես՝ ուժգնապէս ոտքի կանգնելով։

—Ո՞րտեղ նրանց գտնել, ամուսնուս փոխարէն պատասխանեց ուսանողը։

Եւ, իւր ուրախութեան հոսանքը չզսպելով, բացականչեց.

—Ազատել են... ամենքին։ Լսում է երկու հարիւր մարդ։ Ի՜նչպիսի յաղթութիւն։

—Ռուսաց Բաստիլեան առնուած է, ասաց ամուսինս, աշխատելով ժպտալ և ոգևորել ինձ։

Կարծես հրաշքով մի կառք գտնուեց։ Ճանապարհին ամուսինս ինձ պինդ բռնել էր։ Կարծեմ ես մի անգամ էլ ուշաթափուեցի։

Շորերս հանել են, դրել են անկողնի մէջ և ես քնել եմ, ինչպէս սպանուած։

Երբ որ զարթեցի ու զանգահարեցի՝ ննջարանս վազեցին երեխաներս։

—Մայրի՛կ, մայրի՛կ, սիրելի...

Մանեան ընկաւ ծնկներին ու համբուրեց ուսերս, ձեռներս, ծնկներս։

Վօլոդեան էլ ընկաւ նրա կողքին։ Ցանկարծ նա գլուխը բարձրացրեց և կցկտուր ձայնով գոչեց.

—Բոլորին էլ արձակել են. և Բուտիրկայից և Տագանկայից։ Տէ՛ր, Աստուա՛ծ, մայրի՛կ, ինչպիսի ուրախութի՛ւն։

Նա չդիմացաւ ու լաց եղաւ։

VI

Եւ դարձեալ գլխների ծով։ Դարձեալ տասնեակ հազարաւոր ամբոխը անցնում է քաղաքի միջով դեպի գերեզ-

մանատուն։ Գերեզման են տանում երէկուայ շարժման՝ անցեալ առաջնորդներից մէկին։

Մենք մեր կեանքի մէջ՝ առաջին անգամն ենք լսում նրա անունը։ Ամենասովորական, ոչ ռուսական անուն է։ Ծանր երկաթով նրան տապալել էր մի «պահապան» գրոնապահ, որ պատկանում է այն հրոսակախմբերին, որոնք շրջում են խաչուառներով ու պատկերներով, երգում են օրհներգ, ծեծում են «ջհուդներին», ուսանողներին, գիմնազիայի աշակերտներին և բոլոր նրանց, որոնց համարում են ինտելիգենտներ։

Ես և ամուսինս ուզեցինք երեխաներին չթողնել այդ թաղմանը մասնակցելու։ Բայց այդ անկարելի էր։ Եւ նրանց մենք՝ ինքներս տարանք։

—Տեսնում ես, մայրիկ, իրար ընդմիջելով, ասացին նրանք ճանապարհին, ինչպիսի կարգապահութիւն է։ Մի վախիր, նրանք չեն համարձակուիլ վրայ թռչել իրանց մտրակներով։

Ես էլ չէի վախում ամբոխից. ոչ երգեցողութիւնից, ոչ մակագրութիւններից, ոչ էլ իրարանցումից, որ ամեն մի րոպէ կարծ էր սպասել։

Երեխաները գնում էին մեր առջևից։ Սկզբում նրանք շուտ էին գալիս ու պատմում էին մեզ՝ իրանց տպաւորութիւնները, վերջը լռեցին։ Նրանք ապշել էին ընդհանուր պատկերի վեհութեամբ։

Ես և ամուսինս՝ երբեմն կամացուկ՝ իրար յայտնում էինք մեր տպաւորութիւններից, որ ստանում էինք այդքան երկարատև ընթացքում։

Բոլորն հասել էր, որ մենք էլ ստուգէինք մեր կրէդոն։

Այժմեան ձևով «պլատֆորման»։

Մեզ համար այդ տարօրինակ և օտարոտի խօսքը արդէն գործ են ածում և մեր երեխաները։

Ահա մենք—հարիւր հազարաւոր ամբոխի երկու միկրոսկոպային մասնիկ։ Նա մեզ մղում է։ Բայց ախր մենք կամաւոր մասնակցեցինք այս հարիւր հազարեայ բողոքմանը։

Ի՞նչի դէմ։

Առելի ճորտութեան դէմ։ Ի՞նչ ֆլաս, եթէ նրա մի տաններորդ կամ շա՜տ-շա՜տ, մի հինգերորդ մասն է պարզ հասկանում թէ՝ իրանք ի՞նչու համար են կանգնած, ի՞նչ են ուզում տապալել, յանուն ի՞նչի գնալ բացարձակ կռուի և զոհել իրանց կեանքը։ Վնաս չունի։

Ես և ամուսինս ախր մեզ համարում ենք ինքնաճանաչութեան հասածներ և մեզ վերագրում ենք բարձր ինտելլիգենցիայի դասին։ Իսկ այդ ինտելլիգենցիային ուզում են հռչակել՝ իբրև հասարակութիւնը ոչնչացնողներ։ Անարգում են նրան, պարսաւում են, խլում են նրանից յաւիտեան ընթացքի մէջ գտնուած գաղափարների և բողոքների նշանակութիւնը, որ վառուեց նրանով, ահա ինչի որ մենք մասնակցում ենք։ Բոլոր նրա արիւնոտ կամ անարիւն զոհերը, տանջանքները, մահուան պատիժները, աքսորները, դաժանակիր աշխատանքները, բանտերը, հալածանքները—բոլորը, բոլորը յանձնուում են ջնջելու։

Ո՞ւմից։

Հէնց նրանցից, որոնք ղեկավարում են այս ցոյցը։

Մինչև այժմ այդպէս էր մտածում իմ ամուսինը։ Ապպիսի հարցերը ինձ էլ յուզում էին։ Եւ մեր երեխաների մէջ արդէն հասել է այն արհամարհական վերաբերմունքը դէպի մեզ—դէպի պառաւած «ինտելլիգենտներիս» որոնց՝ նրանք, տեսնում էք, ոչ մի բանով էլ պարտական չեն։

Ոչ միայն հայրենիքի առելի անցեալին, այլ և մեզ բոլորիս և մեր առաջնորդողներին, մեր գաղափարներին, մեր սրբութիւններին—փականք։

Այդ բոլորը մենք խորհեցինք մեր մէջ։ Եւ գնում էինք, գնում էինք, զգալով, որ մենք այստեղ ենք, ոչ ստիպուելով, ոչ թէ վախենալով երեխաների համար և նրանց բերինք մեզ հետ միասին, որպէս զի տանը մենակ մնալով, դժոխքի տանջանք չքաշեն։ Կողպել նրանց չի կարելի։ Ծնողական այդ տեսակ իշխանութիւն այլ ևս չկայ գոնէ այն մարդկանց մէջ, ինչպէս, որ մենք ենք. մեզ նման սեռի՝ հնացած մարդասէրներ և գաղափարականներ։

Այո՛, մենք գնում էինք այնպիսի զգացումով, որ կարծես դարձեալ ընթանում ենք մի նոր Բաստիլիա վերցնելու։ Մենք գիտէինք, որ այդ թաղումը կլինի կատարեալ «քաղաքացիական», առանց ծէսերի, առանց ստիպողական եկեղեցական-սիմբոլիզմի, որի հետ առաջինը մենք՝ ամուսնուս հետ հաշտուեցինք։ Վաղուց է, որ մենք մեզ ուղղափառ չենք համարում։ Բայց և այնպէս չհամարձակուեցինք բացարձակ կերպով բաժանուիլ պետական—հոգևորական ճորտութեան հետ։ Երեխաներին մկրտել ենք, ուղարկում ենք նրանց՝ խոստովանքի և հաղորդութեան, յանձնում ենք գիմնազիական՝ փարաջաւոր չինովնիկներին, որ նրանք սովորացնեն, թէ նրանք՝ սրտի ցաւով և կոտրուած ամբողջ հոգեկան «ես»-ով՝ ի՞նչից պիտի աղատուին, երբ գիտութիւնը ցոյց կտայ իրանց թէ՝ ինչպէս պէտք է լուծել էութեան հանելուկը։

Մթնում էր։ Մեր շուրջը, հարիւրհազարաւոր ամբոխի մէջ, առջևից, կողքերից ու ետևից մերթ լռում էին ու մերթ բարձրանում «յաւիտենական յիշատակ» երգի հզոր ալիքները։

Նա հնչում էր ինչպէս եկեղեցական հոգեհանգստեանը, բայց նա այդպէս յայտնում էր անջատուածն այն բոլորից, որոնք հողին պահել են ստիպողական հաւատի շղթաներում։

Մենք նոր էինք նստել ճաշի սեղանի մօտ։ Ամենքս էլ սարսափելի կերպով քաղցած էինք։ Ժամը իններից աւելի կլինէր։

Ցողնածութիւնից՝ սկզբում ուտում էինք լռութեամբ։ Բայց յետոյ միանգամից սկսեցինք խօսել։ Երեխաները դեռ մեղադրում էին ինձ, որ ես կէս ճանապարհին ստիպում էի վերադառնալ։ Միևնոյն էր, մենք չէինք կարող մնալ գերեզմանին, չէինք կարող նոյն իսկ մանել գերեզմանատան դուռը։ Մենք հանդիսի պոչումն էինք։

Ամուսինս դեռ ապշած էր համակրանքի այդ ասպիճան մեծութեան, որ տրուեց աղատութեան զինուորին—գաղա-

նային սպանութեան զոհին։

—Այժ, կրկնում էր նա, այն էլ ի՞նչպէս։ Թող գաղափարի մի կայծ ընկնի նրա մէջ և նա իսկոյն կդառնայ անյաղթելի։

Եւ, կարծես քիչ վախեցած այդ խօսքերից, նա, դիմելով երեխաներին, աւելացրեց.

—Բայց պէտք է՝ դատողութիւնից զուրկ հօտ չդառնալ ու վազել դէպ այնտեղ, ուր վազում են ուրիշները, այն էլ միմիայն տոգորուելով, ցոյցեր անելու։

—Հայրիկ, խօսեց Վօլոդեան, այդպէս Թաղում դեռ չի եղել։ Դու ինքդ էլ ասում ես։ Այժմ խուլիգանները և «սև հարիւրեակ»-ները կդգան։

Մանեան ուզեց մի բան ասել ու յանկարծ բարձրացաւ աթոռից։

—Զանգահարեցին, ես գնամ, բայց անեմ, մայրիկ։

Ես լսողութիւնս լարեցի։ Ահա չխկաց փականքը։ Դուռը բացին։

—Ո՞վ կարող է լինել կիսաձայն ասաց ամուսինս։

Աղմուկն ինձ տարօրինակ թուաց։ Բռնկուած յանկարծակի ճղայնութեամբ, ես էլ նոյնպէս վեր թռայ ու վազեցի դէպի հաշտը։

Սկզբում ես ոչինչ չհասկացայ։ Կիսամութ նախասենեակումն էի, որտեղ վառում էր պատից կախած փոքրիկ լամպան։

Մի ուսանող էր, բայց վէրքը գլխի վրայ, շապկի կուրծքը բոլորովին բաց։ Երկու ընկերները՝ մէկը քաղաքացիական հագուստում, միւսը պաշտօնական «տուժուրկայում» հէնց այդտեղ էլ դրել էին կահաւորակի վրայ։

Մանեան սարսափած նեռուից դէպի ինձ։

—Սպանել են. շշնջաց նա։ Ամենքին սպանում են։ Մայրի՛կ։ Պէտք է նրան փրկել։

Ես կանչեցի ամուսնուս և Վօլոդեային։ Վիրաւորուածին՝ չորս հոգով բերինք առանձնասենեակը և դրինք տաճկական, փափուկ կահաւորակին։

Ուսանողի ընկերներից մէկը գնաց բժշկի ետևից։ Միւսն՝ ինձ հետ միասին՝ սկսեց վերաւորուածին ուշքի բերել։

Ամուսինս, երեխաները, աղախինը օգնում էին մեզ։

—Մենք ուրիշ ելք չգտանք, բացի այն, որ բերինք ձեր տունը։ Եւ նոդկալի սարսափ։ Մեր ներկայութեամբ, կատաղած սև հարիւրեակները բռնեցին մեր ընկերներից մէկին, ծեծեցին նրան, տրորեցին ոտքի տակ, յետոյ սկսեցին աջ ու ձախ նետել ու զարկել քարոտ փողոցին և այդպէս՝ մինչև որ նա չդառաւ անձև զանգուած։

Նա դողում էր և դժուարութեամբ էր արտասանում բառերը։

Վիրաւոր ուսանողը աչքը բացաւ և սկսեց ապշած՝ չորս կողմը դիտել։

Մենք՝ որ և է կերպով փաթաթեցինք նրա գլուխը։ Թրի հարուածը ճեղքել էր նրա գանգը՝ ձախ քունքից փոքր ինչ վերև։ Արիւնն արդէն կանգ էր առել։ Բայց մի վէրք էլ դեռ վզի վրայ կար՝ ծոծրակին մօտ։

Նա նորից ընկաւ մոռացութեան մէջ։ Մենք հեռացինք և մի անկիւնում, ճնշուած սրտով կանգնած, շշնջալով խօսում էինք։

—Ձեզ վրայ ո՞րտեղ յարձակուեցին. հարցրեց Վօլոդեան՝ դժգունած, գրգռուած ու բարկացոտ դէմքով։

—Դարան, ստոր դարան։ Մենք հանդարտ գնում էինք։ Մինչևանգամ չէինք երգում։ Մեր պահակներն առջևումն էին։ Զիմացանք, որտեղից լսուեց հրացանի ձայն, ապա տեղաց գնդակահարութիւն, այն էլ, ինչպէս այժմ ասում են, պաչկաներ ով, աւելացրեց նա հեգնօրէն։

Մի բոլորովին երիտասարդ բժիշկ բերին։ Նա յայտնեց, որ վէրքը շատ երկիւղալի է, սպառնում է ուղեղի բորբոքումն։ Ուղարկեցին փակ կառքի ետևից։ Երիտասարդներից մէկին բժիշկը թողեց իւր մօտ, իսկ մեզ խնդրեց դուրս գալ։

Մենք շարքով նստել էինք ընդունարանում ու լսում էինք։

Լսւում էին վերաւորի խեղդուած հեծկլտանքները։ Յետոյ կցկտուր դարձուածքներ ու բացականչութիւններ։

Սկսուեց զառանցանքը։

Մանեան առաւ իմ ձեռը և մօտեցրեց դռանը։ Մենք՝

ZUUR Арм.ССР

երկուսս ընկել էինք նրա վրայ ու լսում էինք։

Անկարելի էր ջոկել այդ խօսքերն ու բացականչութիւնները, բայց հէնց մենակ ձայները հոգի էին հանում։

Եւ երբ զառանցանքը ընդհատւում էր, վիշտն ինձ աւելի ճնշում էր, և ես ամբողջ էութեամբս դառել էի կարեկցութիւն։

—Նա կմեռնի՞, ասա, մայրիկ, նա կմեռնի՞. շշնջում էր Մանեան, ամբողջ մարմնով սարսռելով։

Ես լռել էի։ Ամուսինս և Վօլօդեան անկիւնում նստած՝ նոյնպէս լռել էին։

Եւ յանկարծ, կարծես թէ տեսիլք՝ աչքիս առաջ կանգնած մի պատկեր. իմ Վօլօդեային տրոլում են ոտքի տակ, ձգում են դէպի վեր և ան զարկւում է քարոտ փողոցին և այդպէս շարունակ՝ մինչև նա չի դառնում մի արիւնոտ, անձև զանգուած։

Սարսափիցը ես սառայ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0315838

ԳԻՆՆ Է 20 ԿՕՊ.

Ցանկացողները պէտք է դիմեն
ԹԻՓԼԻՋ՝ Գուտտեմբերգ գրավաճառանոց:
ԳԱՆՁԱԿ՝ Թարգմանողին՝ կամ Գարեգին
քահանայ Թումանեանցին:

Елисаветполь, Священнику
Теръ-Гарегину Туманьянцу.

ВФ
1